Մենք արդեն գիտենք, վոր առեւտրական ծախսերի այն տոկոսը, վոր մենք ապրանքների վաճառքի գները վորոշելիս՝ պիտի ի նկատի ունենանք, հաշվում և շրջանառության, այսինքն վաճառած ապրանքի գումարի վրա: Հենց զրա համար հավելումների միջին տոկոսն ել առեւտրական ծախսերի հետ համեմատելու համար՝ պիտի հաշվել դուքս ապրանքների վաճառքի արժեքի վրա: Այլ խոսքով ասած՝ հավելումի տոկոսը և առեւտրական ծախսերի տոկոսը պիտի հաշվեն միենույն մեծության վերաբերմամբ, այս դեպքում այդ մեծությունը ապրանքների վաճառքի արժեքն է:

Հավելումի միջին տոկոսը հաշվելը՝ վերջինիս առեւտրական ծախսերի տոկոսի հետ համեմատելու համար (և վոչ թե վաճառքի գինը վորոշելու համար) կատարվում է ամեն ամսի վերջը հետեւյալ կարգով: Վորոշվում է, թե ամսվա ընթացքում ինչքան ապրանք և մտել վաճառքի գնով և ինչքան հավելում և արված այդ ապրանքների ինքնարժեքին, ապա՝ հավելումի գումարը բազմապատկում և 100-ով և բաժանվում ստացված բոլոր ապրանքների վաճառքի արժեքի վրա: Ստացված պատասխանը հավելումի այն միջին տոկոսն է, վոր արվել և ապրանքի վաճառքի արժեքին: Որինակ.

Ամավա ընթացքում մուտք և յեղել	Վաճառքի արժեքի գումարը	Հավելումարը
ալյուր	1500	120
բրինձ, ցորեն և այլ համեմեր	800	80
ձեթ	200	24
նավթ	150	12
աղ	200	16
իլեյ	250	40
շաքար	350	35
մանուֆակտուրա	2000	300
գալանտերիյա	500	125
այլ ապրանքներ	600	108
Հավամենը	6550	860

Այս աղյուսակի գումարների վերաբերմամբ հավելումի միջին տոկոսը հավասար կլինի ($860 \times 100 : 6550 = 13,1\%$):

Իսկ յեթե մենք փորձենք վաճառքի շրջանառության վրա ընկնող առեւտրական ծախսերի տոկոսը համեմատության դնել ստացված ապրանքների ինքնարժեքին արված հավելումի միջին տոկոսի հետ—ապա այդ համեմատությունը սխալ կլինի: Դա կարելի յետ տեսնել հենց նույն այդ որինակից: Հանելով վաճառքի արժեքից այդ ապրանքների հավելումը ($6550 - 860 = 5690$), մենք կատանանք նրանց ինքնարժեքը: Հավելումի գումարը բազմապատկած 100-ով և բաժանած ինքնարժեքի գումարին ($860 \times 100 : 5690$), մենք կստանանք հավելումի տոկոսը՝ $13,1\%$: Հետևապես ապրանքների ինքնարժեքին հաշված հավելումի տոկոսը ավելի բարձր կլինի, քան թե նույն ապրանքների վաճառքի արժեքին հաշված տոկոսը: Հենց այդ պատճառով ել այդ յերկու տոկոսները (առելտական ծախսերի ու հավելումների) չկ կարելի դուրս բերել՝ ստացած ապրանքների ինքնարժեքից յենելով:

Ի հարկե կարելի յետ առելտական ծախսերի տոկոսը դուրս բերել՝ վանառված ապրանքների ինքնարժեքից յենելով, սակայն այդ ննարավոր ե միայն այն դեպքում, յերե յուրաքանչյուր ամսվա վերը ստուգի ապրանքների իրավան մնացորդը յել պարզված լինի իրավան ոգուտի գումարը: Այս գեպքում իրական ընդհանուրը (վալագոյ) ողուտի գումարը հանգում և շրջանառության գումարից. ստացված մնացորդը վաճառված ապրանքների ինքնարժեքի գումարը կլինի: Ապա առեւտրական ծախսերի գումարը բազմապատկվում և 100-ով և բաժանվում վաճառված ապրանքների ինքնարժեքի վրա: Այս բոլորից ստացված յեղակացությունը առեւտրական ծախսերի այն տոկոսը կլինի, վոր ընկնում և վաճառված ապրանքների ինքնարժեքին *):

*) Անդկովկաստան և մասնավորապես ՀՅԽՀ սպառկոռաբերացիայի ցանցը յուր առեւտրական ծախսերի տոկոսները դուրս և բերում վաճառված ապրանքների ինքնարժեքից յենելով: Դրա համար կարևոր կլիներ այսպիս վերջութեան մեջ ամսի վերջը ապրանքների իրական մնացորդները պարզել, ապա՝ վաճառված ապրանքների ինքնարժեքը գործվում և վաճառված ապրանքների վաճառքի գումարից հավելումի միջին տոկոսը (ավյալ ամսվա) հանելով: Ցենթագրենք, թե ընկերությունը տվյալ ամսում արել է 8500 ը. շրջանառություն վաճառքի գնով: Հայտ-

ՅԵ. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՎՈՐՈՇՈՒՄՆ ԸՍ ՀԱՇԽՎՆԵՐԻ

Վորոշել ապրանքների ինքնարժեքը, նշանակում ե հաշվել թե այդ ապրանքը ինչքան արժե մինչև ընկերության պահեստը կամ կենտրոնական խանութը հասցնելու: Այսինքն հաշվով գնված ապրանքի գումարին պիտի ավելացնել այն բոլոր ծախսերը, վոր ապրանք հայթայթողն արել և ապրանքի գնման ու փոխազրության համար:

Վերցնեն այսպիսի մի որինակ.

Գնված են զանազան ապրանքներ, հաշվի գումարը 250 ր.՝ Այն ծախսերը, վորոնի հաւային են վերարդար մատակարարողի կողմից՝

Գորշմատուրք	50 կ.
Փաթեթավորում	1 ր. 50 »
Վարկային 0/0	5 » —
Փոխազրություն ու բարձում .	3 » —

Ընդամենը լսու հաշվի 260 ր.

Այն ծախսերը, վորոնի կատարված են ընկերության կողմից՝ փոխադրավարձ յերկաթուղուն . . . 1 ր. 15 կ. Կայտանից քաղաք տեղափոխելուն . 1 » 85 » ապրանքի գնորդին (որապահիկ) . . 1 » 25 » Ապրանքը խանութում ընդունելիս՝ պարզվեց՝ շաքարի պակասորդ 1/2 կիլո . . . — 83 »

Ընդամենը 265 ր. 08 կ.

Բերված որինակից յերկում ե, վոր հաշվին վերագրված ծախսերի թվում կա 5 ր. Վարկային 0/-ներ: Այդ տոկոսները վերադր ծախս համարել յերբեք չի կարելի, քանի վոր այդ ծախսն առաջանի յէ, վոր նույն ամսում գնված ապրանքների ինքնարժեքն ընկերությունում արժեքը 120/0 համելու: Պիտի պարզել, թե ընկերության վաճառքի ըջանառության (8500 ր.) ապրանքն իննարժեքով ինչպահ արժե: Գրա համար ըջանառության (վաճառքի գնով) գումարը բազմապահում ենք 100-ով յէլ բաժանում 100-ը գումարած տվյալ ամսվա նօսկերմերի միջին տոկոսի վրա: Այսինքն մեր որինակում 8500 ր. վաճառքի շրջանառության ինքնարժեքը հավասար կլինի

$$\frac{8500 \times 100}{100 + 12} \text{ կամ } \frac{8500 \times 100}{112} = 7589 \text{ ր. 28 կուգ. :}$$

Այս ֆուրմուլայով գտնված ինքնարժեքը մոտավոր կլինի. սակայն ապրանքները ցուցակագրելու դժվար աշխատանքից միայն այս կերպ հնարավոր ե խուսափել:

Ծանոթ. Թարգմանի

Նույն ե վոչ թե ապրանքներ գնելու ու տեղափոխելու հետևանքով, այլ այն պատճառով, վոր ընկերությունը սեփական միջոցներ չունի: Յեթե ընկերությունը գնված ապրանքների արժեքը կանխիկ վճարած լիներ, պարզ ե, վոր այդ ծախսը չեր մտնի մատակարարողի հաշվի մեջ:

Ապա, յեթե ընկերությունը փոխանակ ապրանքներն ապասիկ գնելու, փոխառություն աներ բանկից կամ վորեւ մասնավոր անձից և զբանով ապրանք առներ,—պարզ ե, վոր այդ գումարի ծախսը գարձյալ հաշվի մեջ չեր մտնի: Փոխ առած գումարների համար ընկերությունը վճարում ե վորոշ տոկոս, վորը մատակարարողի հաշվին չի վերագրվի, քանի վոր հաշվը կանխիկ դրամով կլինի վճարված: Այս գեղքում ևս տոկոսների ծախսերը հաշվեմատյաններով կգրանցվեն, վորպես առետրական ծախսեր:

Հենց այդ պատճառով վարկային տոկոսները չի կարելի վերադր ծախսել յեվ այն դեպինում, յերբ նրանի մտցված են հաւաքի մեջ յեվ յերբ պիտի ապրանքների իննարժեքը վարուել, ապա վարկային 0/0-ը պիտի «ընդամենը» գումարից դուրս գալ մատակարարության այս ձեռնով՝

Ընդամենը 265 ր. 08 կ.

Դուրս գալով վարկային 0/0-ը 5 » —

Ապրանքների ինքնարժեքը 260 ր. 08 կ.

Ընդհանրագես ապրանքների ինքնարժեքն այսպես ե վորոշվո՞մ համաձայն հաշվի:

Այլ խամերով ասած՝ այն բոլոր, ինչ վոր ծախսված ե ապրանքի վրա մինչեւ նրա խանութը մտնելը, բացառությամբ վարկային տոկոսների, կազմում ե ապրանքի իննարժեքը:

Զ. ԱՌԱՆՁԻՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

Վորպեսզի ամեն մի առանձին ապրանքի ինքնարժեքը վորոշենք, պիտի այդ ապրանքների գնման հետ կապված վերագիր ծախսերի ամրող գումարը բաժանենք այդ ապրանքների քանակի կամ արժեքի վրա: Այդ բաժանումը կատարվում ե տարբեր յեղանակով՝ նայած թե ինչ ապրանքներ են գնված—միայն կշռվի՝ ապրանքներ, խանոն (կշռվի ու հատավաճառ), թե միայն հատավաճառ:

Յեթե հաշվով ստացված են մեկանուն ու մի տեսակի ապ-

բանք, ապա առքի գնին պիտի ավելացնել բոլոր վերադիր ծախ-
քերը. ստացված գումարը այդ ապրանքի ինքնարժեքը կլինի:

Յերբ հաշվով ստացված են զանազան ապրանքներ և այն ել
միայն կշռվի ապրանքներ, ապա բոլոր վերադիր ծախսերի գու-
մարը բաժանվում է յերեք խմբի. մի խումբը—վոր բաշխվում
է համաձայն ստացված ապրանքների քաշի, մյուսը—համաձայն
այդ ապրանքի առքի արժեքի, իսկ յերրորդը—այն ապրանքի ար-
ժեքին և ավելացվում, վորի համար այդ ծախքերն արված են:

Վերոհիշյալ որինակից վերադիր ծախսերի այն մասը, վոր
բաշխվում է համաձայն ապրանքի քաշի, հետևյալն է.

Փոխադրություն և բարձում 3 ր.—

Փոխադրավարձ յերկաթուղուն 1 » 15 կ.

Կայարանից քաղաք տեղափոխելուն 1 » 85 »

Գումար 6 ր.

Այդ գումարը բաժանվում է ստացված ապրանքի ընդհա-
նուր քաշի, յենթագրենք 200 կիլոգրամմի վրա, վորը կկազմէ
մի կիլոգրամմին 3 կոպեկ: Ապա այդ յերեք կոպեկը բազմապատկ-
վում է ստացված ապրանքների ամեն մի տեսակի քաշով, և
այսպիսով ստացվում է առանձին ապրանքներից ամեն մեկին
ընկնող վերադիր ծախքերի գումարը:

Յեթե հաշվով ստացված են թե կշռվի, թե հատավաճառ
ապրանքներ, ապա հատավաճառ ապրանքները կշռվում են առան-
ձին-առանձին և նրանց քաշը գրվում է հաշվի վրա: Այս հատա-
վաճառ ապրանքներից յուրաքանչյուրի վերադիր ծախքերը հաշվ-
վում են վերը ցույց տրված կարգով:

Հստ արժեքի գումարի վերադիր ծախքերին են վերաբերում
վերոհիշյալ որինակի մեջ հետևյալները:

Դրոշմատուրք 50 կոպ.

Ապրանքի գնորդին (որապահիկ) . 1 ր. 25 »

Գումարը 1 ր. 75 կոպ.

Այս խմբի ծախսերի գումարը բաշխվում է ապրանքների
առքի արժեքի գումարի վրա (այսինքն 250 ր).— ստացվում է
մի բուրուն ծախք 0,7 կոպեկ, վորը բազմապատկվում է ստաց-
ված ամեն մի ապրանքի արժեքի գումարով և այս կերպ վո-
րոշվում է այս խմբի վերադիր ծախսը, վոր ընկնում է տվյալ
ապրանքի վրա՝ ըստ նրա արժեքի:

1 ր. 50 կոպ. վաթեթավորման ծախսը, այլ և քաշի պակա-
սորզը այն ապրանքներին են վերաբերում, վորոնց համար այդ
ծախսն արված և կամ վորոնց քաշից պակասել և (այս դեպ-
քում՝ շաքարին):

Նեանակում ե՝ այս կամ այն ապրանքի ինքնարժեքը կազմվում
է այդ ապրանքների առքի զերք, բ) վերադիր ծախսներից, վոր բաշխ-
վում են նամանայն ապրանքի համար, գ) վերադիր ծախսներից, վոր
բաշխվում են նամանայն ապրանքի առքի արժեքի մեջ դ) վերադիր
ծախսներից, վոր վերաբերում են ուղարկի այս կամ այն ապրանքին:

Յեթե մի սայլով խանութն ապրանք և ստացել յերկու կամ
ավելի հաշիվներով, ապա փոխադրավարձի գումարը նախ բա-
ժանվում է հաշիվների մեջ համաձայն առանձին հաշիվներով
ստացվող ապրանքների քաշի և գումարի համապատասխան մա-
սը վերադրվում և առանձին հաշիվների վերաբերող վերադիր ծախ-
քերին:

Սակայն ողետք ե ի նկատի առնել, վոր վերադիր ծախսերն ըստ
քաշի և ըստ արժեքի բաշխելը նպատակահարմար է միայն զեպ-
քերում, յերբ մեծ քանակությամբ նժան ապրանքների հետ միա-
ժամանակ ստացվում են փոքր քանակությամբ թանգ ապրանք-
ներ. որինակ մի սայլով 20 փութ աղ և ստացված ե 5 փութ
կշռող մի հակ մանուֆակտուրա: Աղն արժեն 20 ր., իսկ մանու-
ֆակտուրան՝ 300 ր.: Այս զեպում ապրանքի տեղափոխության
ծախսները պիտի բաժանել բաժան ծախսներն—բաժան ար-
ժեքի. իսկ յեթե մի սայլի վրա ստացվում է արժեքով միորինակ
ապրանքներ, որինակ՝ ալյուր, ըրինձ, շաքար և այլ նպարելեն
(բակալայնի) ապրանքներ, ապա փոխադրական ծախքերը բոլոր
մյուս ծախքերի հետ միասին պիտի բաժանել ըստ ապրանքների
արժեքի: Այս կերպ փոխադրական ծախսերը բաշխելով առանձին
ապրանքների ինքնարժեքի վրա, զգալի ազդեցություն չի անի,
իսկ ծախքերի բաշխումը՝ շատ կհեշտանա:

Բացի այդ, կարող են լինել և գեպքեր, յերբ մի սայլի վրա
ստացված և յենթագրենք մի տակառ ձեթ և մի արկղ զանազան
մանրունք (մի փութ ծանրությամբ): Այս զեպում փոխադրու-
թյան ամբողջ ծախքը պիտի ձեթի ինքնարժեքի մեջ մտցնել:

Ե. Արբանաւերի ՄԻ ՄԻԱՎՈՐԻ ԽՆՔՆԱՐԺԵՔԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Առանձին ապրանքների ինքնարժեքի գումարը բաժանվում
է այդ ապրանքի համար վրա, ստացված գումարը ցույց է տա-
լիս այդ ապրանքի մի միավորի ինքնարժեքը:

Արինակ վերոհիշյալ հաշվով ստացված ապրանքների մեջ կա
10 կիլոգրամմ թեյ՝ 5-ական բուրլով մի կիլոգրամմը, ընդամենը
50 բուրլով:

Այդ թեյին վերոհիշյալ վերադիր ծախքերից ընկնում է.
առաջին խմբից 3×10 30 կ. (ըստ քաշի)
յերկրորդ խմբից $0,7 \times 50$ 35 կ. (ըստ արժեքի)

թեյի ինքնարժեքը 50 ր. 65 կոպ. և:

Այս գումարը բաժանելով թեյի քանակի վրա (10 կիլոգրամմ),
մենք կստանանք մի կիլոգրամմի ինքնարժեքը՝ 5 ր. $6^{1/2}$ կոպեկ.։
Հատավաճառ ապրանքների ամեն մի հատի ինքնարժեքը
(որինակ գանակ, պատառաքաղ, զղալ, առանձին ամանեղեն և այլն) վորոշվում է այդ ապրանքներին ընկնող վերադիր ծախքերը բա-
ժանելով նրանց առքի արժեքի վրա:

Որինակ՝ վերոհիշյալ հաշվով ստացված ապրանքների մեջ
ի միջի այլոց կան զանազան սկարյանոյ ապրանքներ 48 ր. առ-
քի արժեքով— 40 կիլոգրամմ քաշով: Այդ ապրանքներն ստացվել են
մի արկղի մեջ, վորն արժեք 40 կոպեկ և վորն այժմ անպետք
և ու արժեքից գուրկել:

Այդ ապրանքներին վերադիր ծախքեր են ընկնում.
առաջին խմբից $3 \times 40 = 1$ ր. 20 կոպ. (ըստ քաշի)
յերկրորդ խմբից $0,7 \times 48 =$ — 34 » (ըստ արժեքի)
յերկրորդ խմբից — — 40 » ուղղակի (ան-
պետք արկղը)

Գումարն եւ 1 ր. 94 կոպ.

Այդ գումարը բաժանած ապրանքների առքի արժեքի վրա
(48 ր.), մենք մի բուրլուն ստանում ենք 4 կոպեկ. Վեր-
ջինս բազմապատկելով առանձին ապրանքների առքի արժե-
քով՝ մենք կստանանք այդ ապրանքների վրա ընկնող վերադիր
ծախքերի գումարը: Այս գումարը բաժանելով առանձին ապրանք-
ների քանակի վրա, մենք ստանում ենք ամեն մի հատին ընկնող
վերադիր ծախքը: Դումարելով մի հատի ամեր արժեքը յեվ մի հա-
տին ընկնող վերադիր ծախքը, մենք կստանանք ամեն մի հատի ինք-
նարժեք:

Յեթե հաշվով ստացված է մեկանուն ու մեկ տեսակ ապ-
րանք, ապա նրա առքի արժեքին գումարած վերադիր ծախքերի
գումարը բաժանվում է նրա քանակի վրա: Ստացված պատաս-
խանը տվյալ ապրանքի մի միավորի. (մի կիլոգրամմի, մի մետրի
և այլն) ինքնարժեքը կլինի:

Ը. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱԶԱՐՔԻ ԳԻՆԸ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Ամեն մի առանձին ապրանքի գինը վորոշելու համար (մի-
նուույն եւ քաշովի թե հատավաճառ) պիտի ավելացնել առևտրա-
կան ծախսերի միջին տոկոսը և ոգուտի կուտակման նորմալ տո-
կոսը: Որինակ.—առևտրական ծախսերի միջին տոկոսը կազմում է
10-ը. իսկ ոգուտի նորմալ տոկոսը՝ 3: Հարկավոր է 10-ի և 3-ի
գումարը բազմապատկել ապրանքի ինքնարժեքի գումարով, և
մենք կստանանք հավելում գումարը տվյալ ապրանքի վրա, իսկ
գումարելով հավելում գումարը ինքնարժեքի գումարին, մենք
կստանանք ապրանքի վաճառքի գնի գումարը:

Որինակ 1 կիլոգրամմ թեյի ինքնարժեքը 5 ր. $6^{1/2}$ կոպ.
Եր, այդ գումարին հավելում անելով $13^0/0$ (13×5 ր. $6^{1/2}$ կ.), մենք
կստանանք 65 ր. 8 կոպեկ ($65^{1/2}$ կ.): Ուրեմն մի կիլոգրամմ թեյի
վաճառքի գինը հավասար կլինի (5 ր. $6^{1/2}$ կոպ. ($65^{1/2}$)): 5 ր. 72
կոպեկի: Գնահատման միջոցով ամեն մի առանձին ապրանքի վա-
ճառքի գինն այսպես է փառըվում:

Սակայն պետք է նկատի առնել, վոր այս յեղանակով հաշ-
ված վաճառքի գինը միայն մոտվորն է. յուրաքանչյուր ապրանքի
վաճառքի իսկական գինը վորոշում է վարչությունը վոչ թե գնա-
հատման (կալկուլյացիայի) ձանապարհով, ինչպես ցույց է տրը-
գած այստեղ, այլ հավելումների նախահաշվային տոկոսների սահ-
մաններում՝ այնպես, ինչպես հաստատել է ընկերության ընդ-
հանուր (լիազորական) ձողովը:

IV. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄՈՒՄՆ ԸՍՏ ԽՄԲԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

Համաձայն հաշվապահին առաջարկող ապրանքների ճիշտ
հաշվառման պահանջների, այլ և ապրանքների վաճառքի գինը
վորոշելու գործը ճիշտ զեկավարելու նպատակով (տես վերը)՝ ապ-
րանքների գնահատումը կատարվում է ըստ խմբերի:

Ապրանքների առանձին խմբերը հաստատված են Ցենտրոսո-
յուղի ու Առևտրի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից և պար-
տագիր են ամեն մի սպառողական ընկերության համար:

Ա. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

1. ալյուր բժանոյ (տարեկան—քօյք).

2. ալյուր ցորենի.

3. զանազան հատիկներ (կրուպաներ), բացի բրնձից ու սպոյլեր.
4. յուղ ու պանիր.
5. Այլ գյուղաճառասարկան ապրանքներ (միս, ձու, հացահատիկներ և այլն).
6. շաքար և շաքարավագ.
7. թեյ (բուլը տեսակները).
8. մախորկա.
9. ծխախոտ ու ծխախոտեղեն (զլանակ, թութուն, թուղթ).
10. բուսական յուղ (արևածաղկի, կտավհատի, քունջութի, և այլն).
11. աղ.
12. սելլիի. (Սելլովկա).
13. զանազան ձկներ (թարմ, սառցրած, աղ դրած, չորացրած և այլն).
14. գինի, խմիչքեղեն, գարեջուր).
15. Այլ նպարեղեն, գալութային և հրուշակային (կոնդիտերսկի) ապրանքներ (սուրճ, կակաո, թեյի սուրբուզատներ, զանազան արհեստական ջրեր, չոր մրգեր, ընդեղեններ, քաղցրեղեններ ու համեմներ, յերշիկեղեն, պահածո (կոնսերվ), կանֆետներ, հաց, բրինձ, զանազան թխվածքներ):
16. լուցկի.
17. նավթ:
18. Այլ քիմիական—մոսկատելնի ապրանքներ (հասարակ սապոն, սողա, մոմ, անիվի մաղ, զանազան ներկեր, կոշկաների, կավիճ և այլն):
19. Բամբակեղեն գործվածքներ (չիթ, մուսլին, սատին-ֆուլյար, շերստյանկա, կումաչ, սարպինկա, բումազեյա, բայկաբյազ, մողեղոլամ, բամբակի կտավ, բատիստ, նանսուկ և այլն):
20. Մնացած մանուֆակտուրան, պատրաստի շորեր ու գլխի սարքավորում: [Բրդեղեն կտորներ՝ մահուզ, կիսամահուզ, վարտիկացու, շորեղեն (վերին շորերի) ու սատառեղեն: Հատավաճառ ապրանքներ՝ թաշկինակներ, շալեր, սալաններ, յերեսարքիչներ, մետաքսյա ու կանեփի գործվածքներ]:
21. Գալանտերեյա, արիկոստաժ ու պարֆյումերիա, (կոճի թեր, սականեր, քորոցներ—հասարակ ու անզիփական, մատնոցներ, կոճակներ, գործվածքների հատուկ թեր ժապավեններ, բեզինա,

սանրեր, հերկալներ (շպիլկա), հայելիներ, գուլպաներ, ձեռնոցներ, հոտափետ յուղեր, սապոններ ու ջրեր և այլն):

22. Ամեն տեսակի կոշիկեղեն (կաշվի, բրեղենտի, բրդի, բեղնի):

23. Մետաղյա ու յերկաթյա—սկորյանոյ ապրանքներ (բացի ձրագներից ու վերջինիս մասերից):

24. Լուսամուտի ապակի:

25. Ամեն տեսակի ամանեղին (բացի մետաղյա ամաններից) և ձրագներ ու վերջինիս մասերը:

26. Գրքեր ու գրենական պիտույքներ (գրելու թուղթ, փոստի թուղթ, ծրաբներ, թանաք, գրչածայր, գրչակոթ, մատիտ, բետիններ, տետրակներ, քարետախտակներ, քարեգրիչներ և այլն):

27. Մնացած այլ արդյունագործական (վոչ պարենավորման) ապրանքները *):

Բ. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԽՆՔՆԱՐԺԵՔԻ ՎՈՐՈՇՈՒՄՆ ԸՆ ԽՄԲԵՐԻ

Ապրանքների յուրաքանչյուր խմբի ինքնարժեքը վորոշելու համար՝ վորպես որինակ յենթագրենք, թե վերոհիշյալ հաշվով ստացված հն հետեւյալ ապրանքները.

մանուֆակտուրա 107 ր. 10 կող.

թեյ՝ 10 կիլոգրամ 50 » —

շաքար՝ 80 » 44 » —

յերկաթեղեն ու սկորյանոյ ապր. 48 » —

թեյի համար արկլ. — 50 »

յերկաթեղեննու սկորյանոյ ապր. արկղը — 40 »

Բնդամենը 250 ր. —

Մանուֆակտուայի քաշը 70 կիլոգրամ:

Յերկաթեղեն ու սկորյանոյ ապրանքների քաշը՝ 40 կիլոգրամմ:

Հաշվին վերագրված ծախսերը, այլ և ընկերության արած ծախսերը մեզ արգեն հայտնի յեն (անս վերը):

Բացի այդ, ապրանքները խանութում ընդունելիս՝ պարզվել ե.

ա) շաքարի պակասորդ քաշի մեջ ու տարայի համար.—83 կ.

բ) յերկաթեղեն ու սկորյանոյ ապրանքների արկղը անդեռք ե՝ 40 կ.:

*). Ապրանքային խմբերի տակ ցուցակը հատկապես Անդրկովկասյան գյուղական սպառող, ընկերությունների համար վորոշ կրծատման և յենթարկված համաձայն տեղական պայմանների: Այդ ցուցակը յենթագրում ենք, վոր սպառութեացիայի կենտրոնները կուղարկեն իրենց ցանցին. Ծան. թարգմ.

Այդ բոլոր վերադիր ծախքերը՝ բաժանված առանձին ապ-
րանքների վրա՝ կտան հետեւալ թվերը.

Ապրանքների անունները	Բոռւտտո	Առքի արժեքը	Վերադիր ծախսերը				
			Ուղ- ղակի	Հաստ քաշը	Հաստ գումարի	Հաստ մեջնը	
մանուֆակտուրա.	70 կտ.	107	10	1 50	2 10	— 75	4 35
թեյ	10 »	50	—	—	— 30	— 35	— 65
շաքար	80 »	43	17	— 83	2 40	— 31	3 54
յերկիլ. և սկոր.							
ապրանք	40 »	48	—	40	1 20	— 34	1 94
Հաստմեջնը	200 կտ.	248	27 *)	2 73	6 —	1 75	10 48

*) Ծանոթություն. — Այս գումարի մեջ չեն մտնում յերկու արկղի արժեքը՝ 90 կոտ. և շաքարի պակասորդը՝ 83 կոտ.։

Յուրաքանչյուր խումբ ապրանքի առքի արժեքը գումարած վերադիր ծախսերի այն գումարը, վոր այդ ապրանքի խմբին և ընկնում, կազմի յուրաքանչյուր ապրանքային խմբի ինքնարժեքը. այինքն.

Ապրանքների անունները	Առքի արժեքը	Վերադիր ծախսեր	Ինքնար- ժեք.
մանուֆակտուրա	107	10	4 35
թեյ	50	—	65 50 65
շաքար	43	17	3 54 46 71
յերկաթեղին. սկոր յանոյ	48	—	1 94 49 94
արկղ	—	50	— — 50
Հաստմեջնը	248	77	10 48 259 25

Վերադիր ծախսերի բաշխումն ըստ ապրանքային խմբերի և վերջիններիս ինքնարժեքի վորոշումը կատարվում է հատուկ զնահատման թերթիկի վրա:

Գ. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Համաձայն խանութից ընկերության հաշվապահության տըր-
ված տեղեկանքների ընդունված ապրանքների վերաբերմամբ՝
հաշվապահը յուրաքանչյուր ստացվող հաշվի համար կազմում է
հատուկ զնահատման թերթիկ: Այդ թերթիկի մեջ մտցվում են հե-
տեւալ տեղեկությունները. մատակարարողի հաշվից—ստացված
ապրանքները և գնահատումը, իսկ փաստաթղթերից—վերադիր
ծախսերի տվյալները (զբամարկվի յերբի որդերներից, առհաշիվ
անձանց հաշվետվություններից, այլ և ապրանքի փոխադրության
ընթացքում առաջացած պակասորդներից): Գնահատման թերթիկը
լրացվում է մի որինակ, զրգում է թանաքով՝ բոլորովին անկախ,
թե մատակարարողի հաշիվը հաշվապահական զրքերում զրանց-
վել է, թե գեռ ևս չի գրանցվել:

Գնահատման թերթիկը կազմվում է 100 թերթանոց տետրակ-
ներով: Համարակալվում է տարեսկզբից մինչև վերջը: Ամեն մի
թերթիկը լցնելուց հետո, զրգում է հետեւալ թերթիկի համարը:
Գնահատման թերթերի №№-ը զրգում են համապատասխան առ-
քանքային հաշվի (կամ փակտուրայի) վրա:

Վերոհիշյալ որինակով լրացնելով զնահատման թերթիկը,
մենք կունենանք հետեւալ պատկերը.

(Տես մյուս յերեսը)

Определение направления и величины вектора ρ .		Приближенное определение вектора ρ .		Приближенное определение вектора ρ .		Приближенное определение вектора ρ .		Приближенное определение вектора ρ .		Приближенное определение вектора ρ .	
Физический параметр	Физический параметр	Физический параметр	Физический параметр	Физический параметр	Физический параметр	Физический параметр	Физический параметр	Физический параметр	Физический параметр	Физический параметр	Физический параметр
$J_b p \frac{d\omega}{dt}$, b и p фиксированы, $\Delta m \neq 0$,		$-$	$-$	6	$-$	$-$	$-$	315	315	315	315
$p \frac{d\omega}{dt}$ фиксировано, b		$-$	$-$	$-$	$-$	$-$	$-$	1927	1927	1927	1927
$\Delta m \neq 0$, p фиксировано, b ($\sigma_{\text{расчет}} \approx \sigma_b$)		$-$	$-$	1	25	3	3	3	3	3	3
b и p фиксированы, $\Delta m \neq 0$		1	50	$-$	$-$	$-$	$-$	10	10	10	10
$\Delta m \neq 0$, b фиксировано, $(\Delta m \ll \sigma_b)$		$-$	40	$-$	$-$	$-$	$-$	48	48	48	48
$\Delta m \neq 0$, p фиксировано, b фиксировано, $\Delta m \ll \sigma_b$		$-$	83	$-$	$-$	$-$	$-$	25	25	25	25
$\Delta m \neq 0$, p фиксировано, b фиксировано, $\Delta m \ll \sigma_b$		2	73	6	$-$	1	25	10	48	10	48
$\Delta m \neq 0$, b фиксировано, p				U_b^h	U_b^h	U_b^h	U_b^h	U_b^h	U_b^h	U_b^h	U_b^h
p фиксировано, $\Delta m \neq 0$				$\frac{\partial U_b^h}{\partial b}$	$\frac{\partial U_b^h}{\partial b}$						
$\Delta m \neq 0$, p фиксировано, b				$\frac{\partial U_b^h}{\partial p}$	$\frac{\partial U_b^h}{\partial p}$						
b фиксировано, p				70	107	1	50	2	10	$-$	75
$\Delta m \neq 0$, b фиксировано, p				10	50	$-$	$-$	$-$	4	4	4
b фиксировано, p фиксировано, $\Delta m \neq 0$				10	30	$-$	$-$	$-$	35	35	35
$\Delta m \neq 0$, b фиксировано, p фиксировано				80	43	17	83	2	31	3	3
b фиксировано, p фиксировано, $\Delta m \neq 0$				40	48	$-$	40	1	20	$-$	$-$
$\Delta m \neq 0$, b фиксировано, p фиксировано				1	50	$-$	$-$	$-$	$-$	$-$	$-$
$\Delta m \neq 0$, b фиксировано, p фиксировано		200	248	2	73	6	$-$	1	75	10	48
$\Delta m \neq 0$, b фиксировано, p фиксировано										36	36
$\Delta m \neq 0$, b фиксировано, p фиксировано										295	295

Ամենից առաջ լրացվում է «վերադիր ծախսերի» բաժինը (թերթիկի ձախ կողմից). այնտեղ մացվում են տիյալ հաշվով ստացված ապրանքներին վերաբերող բոլոր ծախսերը (այսինքն այն ծախսերը, զոր ապրանք մատակարարողը վերագրել է հաշվին, այլ և ընկերությունն ինքն և արել), այլ և ապրանքների պակասումը ճանապարհին և քաշի այն պակասորդը, զոր հայտնաբերված և ապրանքներն ընդունելիս:

Վերադիր ծախսերի յուրաքանչյուր հոգվածը (տես «Վերադիր ծախսերը» գլուխը՝ վերեռւմ) զրկում ե առանձին տողում, իսկ հոգվածի գումարը՝ այս կամ այն սյունյակում, նայած թե վոր ապրանքային խմբին ե վերաբերում տվյալ ծախսը։ Տվյալ հաշվով վերադիր ծախսերն ամբողջությամբ զրանցելուց հետո, նրանց առանձին սյունյակները գումարվում են և գումարը զրկում ե «ընդամենը» տողում։ Նույն տողի վերջին սյունյակում զրկում ե վերադիր ծախսերի «ընդամենը»։

Փաստաթղթերի և սյունյակի մեջ ցույց են տրվում այն փաստաթղթերի և վորոնցից գրանցվում են այդ վերադիր ծախսելը:

Դրանից հետո լրացվում և գնահատման թերթիկի ներքեմ մասը՝ այդտեղ մտցվում են ապրանքային առանձին խմբերի անունները՝ յուրաքանչյուրի բրուտո քաշը և առքի արժեքը. ըստ վորում պիտի ի նկատի առնել, վոր առքի արժեքը պիտի հաշվել վոչ թե ապրանքի բրուտառո քաշի համար, այլ այն քաշի համար, վոր փասորին զործակատրին է տրված առ հաշիվ: «Բրուտառո» քաշն այս գեպքում ցույց է տրվում միայն նրա համար, վոր կարողանանք վրաշել բաժին համեմատական հաշվով հասնող ծախ- ֆերը: Ապա «բրուտառ քաշը» և «առքի արժեքը» սյունյակները առանձին պոտաճին գումարվում են և ստացված գումարները ցույց են տրվում «ընթափենք» տողի վրա:

Ապա հաշվում են այս կամ այն ապրանքային խմբերին համապատասխան գումարը՝ ուղղակի, ըստ քաշի և ըստ գումարի:

Դրան համար «ըստ քաշի» սյունյակում ցույց տրված ընդհանուր գումարը բաժանվում է բոլոր պարանքային խմբերի «բրուտոս» քաշի վրա, ստացված թիվը այն գումարն է, վոր ընկնում է ապրանքներից մի կիլոյի վրա և զվարում է՝ «մի կիլոյին» բառերի ներքեւում։ Ապա այդ թիվը բաղմապատկիվում է յուրաքանչյուր ապրանքային խմբի բրուտոս քաշով. ստացված գումարը յուրաքանչյուր ապրանքային խմբին հանող վերադիր

տոկոսների գումարն և «ըստ քաշի», վորը և զրվում և նույն սյունյակում՝ համապատասխան ապրանքային խմբի դիմացը:

Նույն ձևով ենք վարդում «ըստ գումարի» վերադիր ծախսերի հետ. ըստ գումարի ծախսերի գումարը բաժանում ենք բոլոր փաստորեն ստացված ապրանքների առքի արժեքի վրա. ստացված թիվը այն գումարն է, վոր ընկնում և ապրանքների արժեքի (առքի) մի բուրլուն:—Այդ գումարը զրվում և «ըստ գումարի» սյունյակում՝ «մի բուրլուն» բառերի հետևում: Ապա այդ թիվը բազմապատկիւմ և յուրաքանչյուր ապրանքային խմբի առքի արժեքով և զրվում համապատասխան ապրանքային խմբի դիմաց՝ դարձյալ նույն «ըստ գումարի» սյունյակում:

«Ուղղակի» վերադիր ծախսերը, ջոկ-ջոկ, զրվում են «ուղղակի» սյունյակում այն ապրանքային խմբերի դիմաց. վորոնց համար այդ ծախսերն արված են:

Վերադիր ծախսերի այսպիսի բաշխումից հետո գուրս ենք բերում նրանց առանձին սյունյակների գումարները, փորոնք և զրվում են «ընդամենը» սյունյակում: Ապա վերջինս գումարվում և ապրանքի առքի արժեքի հետ, վոր նույն տողումն և զրված: Այս կերպ մենք ստանում ենք ապրանքի ինքնարժեքը, վորը և զրանցում ենք «ինքնարժեքը» սյունյակում:

«Վաճառքի արժեքը» սյունյակում զրվում և առանձին խմբ-բավորումներով ապրանքների վաճառքի գինը, ապա առանձին ապրանքային խմբերի վաճառքի արժեքից դուրս զալով նույն խմբերի ինքնարժեքը, մենք գտնում ենք, թե ինչպիսի գումարի հավելում և արված: Հավելման այս կերպ գտնված գումարը մենք զբանցում ենք «Հավելում» սյունյակում: Յեթի ինքնարժեքի գումարը ավելի մեծ և վաճառքի արժեքի գումարից, տարբերությունը ցույց է տալիս տվյալ ապրանքի վրա արվելիք վնասը, վորը և զրանցվում և «վնաս» սյունյակում: Վնասը կարող և առաջանալ՝ կամ բարձր առքի գնից, կամ (ավելի հաճախ) ծայրահեղ բարձր վերադիր ծախսերից, վոր այդ ապրանքների վրա յե ընկնում:

Գնահատման թերթիկի մեջ առանձին տողում ցույց է տըր-վում նաև այն ամբողջ տարան, վոր գնահատվում և հանձնվում և գործակատարին առաջակի, ըստ վորում՝ միայն նշանակվում է տարայի քանակին ու վաճառքի արժեքը: Յեթե այդպիսի տարայի արժեքը մտցված է հաշվի մեջ, ապա այդ գումարը (զուրս յե-

կած դնի իջևաման գումարը) զրվում և «առքի արժեքը» սյունյակում:

Տարայի առքի արժեքի գումարը համեմատելով նրա վաճառքի արժեքի գումարի հետ, կըստանանք այդ տարայի վրա ստանալիք ոգուռը (հավելումը) կամ վնասը, վոր և պիտի գրանցել համապատասխան սյունյակի մեջ: Յեթե տարան ձրի յե ստացված ու հաշվի մեջ չի նշանակված նրա արժեքը և յեթե այդ տարան գնահատվում ու առ հաշվի տրվում և գործակատարին, ապա այդ տարայի վաճառքի արժեքը զրվում և յերկու անգամ՝ «հավելում» և «վաճառքի արժեքը» սյունյակներում:

Յեթե ապրանքների հետ գնված են նաև փաթեթներ (թղթի տողբակներ) և նրա առքի գումարը մտնում և ապրանքային հաշվի մեջ և յեթե այդ փաթեթի արժեքը զրվում և (ամբողջովին կամ 50% -ով) գործակատարի հաշվին, ապա այս վերջինին տըր-ված փաթեթների արժեքը նույնպես պիտի մտցնել գնահատման թերթիկի մեջ: Յեթի այդ փաթեթներն ստացված են առանձին հաշվով, պիտի կազմել առանձին գնահատման թերթիկ: Այս դեպքում «ըրուտառ քաշը» և «առքի արժեքը» սյունյակներում գրրվում և այն իրական քաշն ու արժեքը, վոր գործակատարի հետ ունեցած պայմանով՝ վերջինիս են հանձնվում առ հաշվի:

Փաթեթների այն արժեքի գումարը, վոր նշանակված և «առքի արժեքը» սյունյակում, կըկնվում և նաև՝ «վաճառքի արժեք» սյունյակում: Փաթեթներին վերադիր ծախսեր են հաշվում ընդհանուր հիմունքներով: Փաթեթների այն մասի վերադիր ծախսերը, վորոնքի հաշվի ընկերության են գործադրվում և գործակատարին են առ պիտի վոչ առ հաջիկ, հաշվում են առկտրական ծախս:

Ընդհանուր առմամբ փաթեթների ինքնարժեքը միշտ ավելի բարձր կլինի նրանց վաճառքի արժեքից: Այս դեպքում տարբերությունը վնաս է, վոր պիտի գրանցվի «վնաս» սյունյակում:

Այս կերպ գնահատման թերթիկի ներքեմ մասը լրացնելուց հետո՝ վերջինիս յուրաքանչյուր սյունյակը գումարվում և և զրանցվում «ընդհանը» տողում:

Վերջում լրացվում և գնահատման թերթի վերին մասը՝ աջ կողմից:

«Առքի արժեքը համաձայն հաշվի» տողում զրվում բոլոր փաստորեն ստացված ապրանքների առքի արժեքի գումարը: Այդ գումարը վերցվում և անմիջականորեն մատակարարողի հաշվից և պիտի համապատասխան գնահատման թերթիկի ներքեռում՝ «առքի արժեքը»

Այսունյակին: Այլ խոսքերով՝ ասած՝ այս գումարի մեջ մտնում են զործակատարին փաստորեն հանձնված ապրանքի փաշի պակասորդին, (չառայի արժեքը: Ինչ վերաբերում է ապրանքի փաշի պակասորդին, (չառայի մաշումին (այս մասին հատուկ արձանագրություն պիտի լինի), այլ և այն բոլոր ծախսերին, վոր առերական ծախսերին են վերաբերում, նույնպես և դրոշմատուրքի, փաթեթների (արկղ, պարան և այլն), խանութային գույք ձեռք բերելու համար արված ծախսերը—վորոնք մատակարարողը հաւաք մեջ և մտցրել՝ այդ բոլորը ստացված ապրանքների առքի արժեքի մեջ չեն մտնում:

«Վերադիր ծախսերի» տողում գրվում են այն վերադիր ծախսերի գումարը, վորն ունենք թերթիկի համապատասխան մտսում:

«Ինքնարժեքը» ստացվում է ապրանքների առքի արժեքի ու «վերադիր ծախսերի» գումարումից:

«Վաճառքի արժեք» տողում գրվում են այն գումարը, վոր համար գործակատարը ապրանքներն ընդունելիս՝ ստորագրել են մատակարարողի հաշվի վրա:

«Հավելում» տողում գրվում են ինքնարժեքի ու վաճառքի արժեքի տարբերությունը:

Գնահատման թերթիկը ստորագրվում է հաշվետարի ու վարչության անդամի կողմից և կպցվում (կարվում կամ քորոցով ստացվում) և մատակարարողի հաշվին:

Գնահատման թերթիկների ու մատակարարողների հաշիվների հիման վրա պահվում են հատուկ զնամնաման զիրք, վորի մեջ ապրանքային առանձին խմբերի համար՝ պահվում են առանձին հաշվի: Գնահատման այդ զիրքը կիրառելու յեղանակի մասին մենք մանրամասն ցուցումներ չենք տալիս, քանի վոր այդ զիրքը ցուլացնում են կալկուլացիոն թերթիկների ամբողջ բովանդակությունը՝ միայն առանձին-առանձին ապրանքային խմբերի վերաբերմամբ:



35 կ.



«ԶԱԿԿՆԻԳԱ»

ՀՐԱՄԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԸ ՔԻՑԼԻՄ, ԱՌԱԽԹԱՎԻ ՀՆՈՒԹ
ՊՈՂՈՒՄ № 24.

«Ազգային գրադարան



NL0290330

31459